ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ մ.գ.թ. դասախոս, ԵՊՀ ԻՄ ասիստենտ
ԻՐԻՆԱ ՌՈՄԱՆԻ ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ
ՀՊՄՀ դասախոս, ԵՊՀ ԻՄ ասիստենտ

Բանալի բառեր: *Ժողովրդական ստեղծագործություն, կրթություն, դաստիարակություն, բարոյական արժեքներ, նախադպրոցական տարիք, առակ, վարքագիծ, այլ:*

Համառոտագիր: *Սույն հուդվածում փորձել ենք ներկայացնել առակի դաստիարակչական նշանակությունը և արժեքը նախադպրոցականների բարոյական որակների զարգացման գործում: Հոդվածում վերլուծված և ներկայացված է ինչպես առակի էությունը, առանձնահատկությունները, այնպես էլ շեշտադրված է առակի բարոյական նշանակությունը, ինչը փորձել ենք հիմնավորել մեր կողմից մշակված պարապմունքի օրինակով:*

Ժողովրդական ստեղծագործությունները մանկավարժության մեջ մեծ նշանակություն են ունեցել սերունդների կրթության և դաստիարակության գործում: Կրթության մեջ դրանք գաղափարական-գեղագիտական կատարելության հասնելու չափանիշներից են, որոնց դերը անգնահատելի է մանկավարժական գործընթացում, քանի որ այն ժողովրդի կերտած բանավոր ստեղծագործությունների ամբողջությունն է և նպաստում է մատաղ սերնդի դաստիարակությանը:

Յուրաքանչյուր մարդ ծննդյան օրից ի վեր շրջապատ-

ված է հեքիաթներով ու առակներով: Առակների միջոցով են սերնդեսերունդ փոխանցվել մարդկության իմաստությունն ու գիտելիքները. չէ՞ որ այդպես ամեն ինչ ավելի հեշտ է ընկալվում և հիշվում: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ հենց մանկավարժությունն է ուսումնասիրում առակի բարոյական, դաստիարակչական և ուսուցողական ազդեցությունը ձևավորվող և զարգացող երեխայի վրա:

Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է, այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով՝ բարությամբ, արդարամտությամբ, գեղեցիկի ընկալմամբ և հանդուրժողականությամբ:

Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ, որն ավելի ազդեցիկ է նախադպրոցական տարիքում[1][2]:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին[2][3] :

Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական վարքագծի և սովորույթների ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է

1 Ջ.Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2006:

2 Թոփուզյան Ա.,Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան 2009:

բնութագրել իբրև «բարոյական» կամ «բարոյականության որակ»: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, որն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության:

Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկանիշներ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ: Այդպիսի հատկանիշներից են՝ բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը, ազնվությունը և այլ:

Նախադպրոցական տարիքից սկսած՝ աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նշված անձնային որակները, որոնք համալրում են նրա բարոյական համակարգը: Բարոյական դաստիարակությունը ենթադրում է մեծահասակի և դաստիարակի ակտիվ մասնակցություն և աջակցություն, ովքեր բարոյական դաստիարակության ընթացքում հանդես են գալիս «սոցիալական ուղեկցողի» դերում:

Բարոյական դաստիարակության հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, ովքեր փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ:

Այսօր ժամանակի պահանջ է դեռևս նախադպրոցական տարիքից բարոյական արժեհամակարգին ծանոթացնելը, երեխայի մեջ կամային տարբեր որակների ձևավորումը, ինչը հնարավոր է գեղարվեստական ստեղծագործությունների, առակների, հեքիաթների միջոցով:

Առակը կարևոր նշանակություն ունի նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակության և կամային որակների զարգացման գործընթացում: Այն բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է։ Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն։ Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին հիմնականում գրվել չափածո[4]։

Առակի վարպետներ են Եզովպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Աթաբեկ Խնկոյանը /Խնկո Ապերը/։

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։ Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ, մեծ մասամբ, վերջում արտահայտված եզրակացությունը։ Առակի հերոսը մարդն է՝ ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն։ Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց։ Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը։ Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն։ Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա։ Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է։ Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը։ Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները։ Հայ գրականության մեջ

առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով. դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում: XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները, իսկ հետո նաև Աթաբեկ Խնկոյանի առակները:

Ըստ Մխիթար Գոշի առակները լինում են 3 տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են[3]:

Խրատական եզրակացությունը, որ հեղինակը կոչում է խրատ, նշանակ, ճշմարտություն և այլ բառերով, 2 տեսակ է: «Ճշմարտությունը առակների հեղինակի համար երկու բովանդակություն կարող է ունենալ, երկու էություն՝ աշխարհական և եկեղեցական, ըստ որում նրա նպատակն է «կերպարանել»՝ պատկերացում տալ, բացահայտել, ցուցադրել, արտացոլել այդ երկու ճշմարտություններն այլաբանորեն: Դատաստանագրքում հեղինակը ձգտել է նույն նպատակին հասնել՝ ճշմարտությունը (դարձյալ՝ եկեղեցական և աշխարհական) պարզել օրենսդրական միջոցներով՝ կազմելով դրա համար 2 տիպի օրենքներ»: Եվ քանի որ առակագրի համար էականը «ճշմարտությունն» է, ուստի առակի առասպելն այնպես է հորինվում, որ հարմարվի բարոյակրթական մասին կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասին ավելի մեծ տեղ է հատկացվում, քան պատմվածքին,

3 https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%AF

որն էլ խոսում է առակի ուսուցողական նպատակի մասին[4] [4]։

Կարևորն այն է, որ պատկերավոր ստեղծագործություններ լինելուց բացի, առակները նաև շատ հետաքրքիր և ուսուցողական են, ինչն էլ նպատում է դրանց արդյունավետ կիրառմանը նախադպրոցական ուսումնական հաստատություններում, քանի որ երեխան սիրում է սովորել օրինակով և ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը[5][5]։

Ուստի, այն դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև այսօր սիրված են ու շարունակում են մնալ որպես դաստիարակչական արժեք ունեցող գրական ստեղծագործություններ։

Ստորև ներկայացված է մեր կողմից մշակված պարապմունքի օրինակ՝ ուղղված աշխատանքային դաստիարակությանը առակի միջոցով։

Պարապմունքի պլան

Թեմա՝ Աշխատասիրություն և պատասխանատվություն

Խումբ՝ ավագ

Տարիք՝ 5-6 տարեկան

Տևողությունը՝ 25- 30 րոպե

Նպատակը՝ «Ճպուռն ու մրջյունը» առակի միջոցով ավագ նախադպրոցականների մոտ դաստիարակել աշխատասիրության և պատասխանատվության զգացում։

Ակնկալվող արդյունքները՝

Պարապմունքի ավարտին երեխաները կարողանան.

- Կարևորել աշխատասիրության և պատասխանատվության դերը իրական կյանքում,
- Վերլուծել առակի կերպարների առանձնահատկությունները,

4 https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%AF
5 http://arm-biography.blogspot.com/2013/05/Atabek-Khnkoyan.html

- Գտնել նմանություններ և տարբերություններ կերպարների միջև,
- Փորձել խորհուրդներ տալ նրանց և այլ։

Անհրաժեշտ պարագաներ՝ առակների նկարազարդ գիրք, համակարգիչ, մեծ էկրան, թղթեր, գունավոր մատիտներ։

Ընթացքը՝ Դաստիարակը երեխաների հետ խոսում է առակի նշանակության մասին, այնուհետև ընթերցում է Ա. Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» առակը, որից հետո երեխաները դիտում են մուլտֆիլմը և դաստիարակի հրահանգով նկարում իրենց դուր եկած հատվածը կամ կերպարին։ Աշխատանքները վերջում հավաքվում և քննարկվում են։

Ֆիզկուլտ դադար:

Ամփոփում

- Ինչի մասին էր առակը։
- Ինչը դուր եկավ։
- Ինչ սովորեցինք։
- Ինչպես կվարվեիք մրջյունի կամ ճպուռի փոխարեն։
- Ինչը կցանկանայիք փոխել առակում։
- Ինչ խորհուրդ կտաք մրջյունին և ճպուռին,
- Այլ։

АННА СИМОНЯН, ИРИНА ПОНОМАРНКО - ВОСПИТАТЕЛЬНАЯ ЦЕННОСТЬ БАСЕН В ДОШКОЛЬНОМ ВОЗРАСТЕ - В этой статье мы постарались представить воспитательное значение басен и их ценность в развитии нравственных качеств дошкольников. В статье анализируется сущность и особенности басен, а также подчеркивается их нравственное значение, которое мы постарались обосновать на примере разработанного нами занятия.

Ключевые слова: Народное творчество, образование, воспитание, нравственные ценности, дошкольный возраст, басня, поведение и др.

ANNA SIMONYAN, IRINA PONOMARENKO - EDUCATIONAL VALUE OF AMBASSADORS IN PRESCHOOL - In this article we have tried to present the educational significance and value of the parable in the development of the moral qualities of preschoolers. The article analyzes the essence and features of fables, and also emphasizes their moral significance, which we tried to substantiate using the example of the lesson developed by us.

Keywords: Folk art, education, upbringing, moral values, preschool age, fable, behavior, etc.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1967:
2. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2006:
3. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան 2009:
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%AF
5. http://arm-biography.blogspot.com/2013/05/Atabek-Khnkoyan.html